ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 462.1. Սույն օրենսգրքի 461-րդ հոդվածով կամ 462-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննության ենթարկվելուց հրաժարվելը կամ խուսափելը կամ հետազոտման համար նմուշ տալուց հրաժարվելը կամ խուսափելը

1. Սույն օրենսգրքի 461-րդ հոդվածի կամ 462-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննության ենթարկվելուց հրաժարվելը կամ խուսափելը կամ հետազոտման համար նմուշ տալուց հրաժարվելը կամ խուսափելը.

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մինչև վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ կամ որոշում կայացնելու նպատակով առանձին սենյակ հեռանալը, կամավոր ներկայացել է նմուշառմանը կամ կամավոր ենթարկվել է փորձաքննության: